

Կանաչ Կլիմայի Հիմնադրամ (ԿԿՀ) Կանաչ Տնտեսության Ֆինանսավորման տարածաշրջանային ծրագիր (ԿՏՖԾ) – ԿՏՖԾ՝ Հայաստան II – ԱԿԲԱ Լիզինգ II

Երկիր

Հայաստան

Ծրագրի համար

56854

Բիզնես ոլորտ.

Լիզինգային ֆինանսավորում

Ծանուցման տեսակ

Մասնավոր

Բնապահպանական կատեգորիա

ՖՀ

Հաստատման ամսաթիվ

Դեկտեմբերի 16, 2025 թ.

Կարգավիճակ

Գտնվում է ուսումնասիրման փուլում, սպասում է վերջնական վերանայման

**Անգլերեն տարբերակի
հրապարակման ամսաթիվը**

Դեկտեմբերի 17, 2025 թ

Համաձայն «Տեղեկատվության հասանելիության դիրեկտիվի» 1.4.2 (iii) բաժնի՝ « Այն նախագծերի համար, որոնք հաստատվել են Բանկի ղեկավարության կողմից, որոնց վերաբերյալ Տնօրենների խորհուրդը պատվիրակել է հաստատման լիազորությունը, Նախագծի ամփոփ տեղեկագիրը պետք է հրապարակվի Բանկի անդամ երկրին՝ համապատասխան առարկությունների չներկայացման ծանուցման ժամկետի սկզբում՝ համաձայն ՎՉԵԲ-ի հիմնադրման համաձայնագրի 13 (iii) հոդվածի»:

Ծրագրի նկարագրություն

«ԱԿԲԱ Լիզինգ» ՓԲԸ-ին մինչև 10 մլն ԱՄՆ դոլարի չափով առանց գրավի առաջնային վարկի տրամադրում, որից մինչև 7.5 մլն ԱՄՆ դոլարը Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՉԵԲ) կողմից, իսկ մինչև 2.5 մլն ԱՄՆ դոլարը՝ Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագրի (ԿՏՖԾ) ներքո («ԿՏՖԾ Ծրագիր») գործող Կանաչ Կլիմայի Հիմնադրամի (ԿԿՀ) կողմից:

Ծրագրի նպատակները

Վարկային միջոցները կօգտագործվեն տեղական մասնավոր հատվածի առևտրային ենթա-լիզինգառուների կողմից կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ֆինանսավորման նպատակով լիզինգի տրամադրման համար՝ գենդերային բաղադրիչի ներգրավմամբ՝ Հայաստանում ԿՏՖԾ չափանիշներին և հաշվետվությունների պահանջներին համապատասխան: Վարկային միջոցների 100 տոկոսը պետք է ուղղվի Կանաչ տնտեսության անցումային ներդրումներին: «ԱԿԲԱ Լիզինգը» տեխնիկական համագործակցության («ՏՀ») շրջանակներում ծրագրի խորհրդատուների կողմից կստանա վերապատրաստումներ, ինչպես նաև աջակցություն՝ ուղղված կարողությունների զարգացմանը և ծրագրի իրականացմանը:

Անցումային ազդեցություն

Վաղ անցումային ազդեցության ցուցանիշը՝ ETI 75

Ծրագիրը նպաստում է «Կանաչ անցումային ազդեցության» (Green TI) որակի ապահովմանը՝ ֆինանսական միջնորդներին տրամադրելով ֆինանսավորում և փորձագիտական գիտելիք՝ մասնավոր հատվածում իրականացվող ներդրումների համար, որոնք ուղղված են կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիաների և լուծումների ֆինանսավորմանը: Այն կհեշտացնի Հայաստանի անցումը Եկոլոգիապես կայուն, ցածր ածխածնային և կլիմայի նկատմամբ կայուն տնտեսության:

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվություն

ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն («ԱԿԲԱ Լիզինգ», «ԱԼ») հիմնադրվել է Հայաստանում և պատկանում է «ԱԿԲԱ Բանկ» ՓԲԸ-ին՝ հանդիսանալով առաջատար Հայաստանի լիզինգի շուկայում:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

7,500,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեք

10,000,000.00 ԱՄՆ դոլար

Հավելյալություն

- **Ֆինանսավորման կառուցվածք.** ՎԶԵԲ-ն առաջարկում է ֆինանսավորում, որը շուկայում հասանելի չէ այլ առևտրային աղբյուրներից՝ խելամիտ պայմաններով և դրույթներով:
- **Նորարարական ֆինանսավորման կառուցվածքներ և/կամ գործիքներ.** ՎԶԵԲ-ն առաջարկում է նորարարական կանաչ ֆինանսավորման գործիք, որը ֆինանսավորման կառուցվածքում ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են կլիմայական և բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՍԿ) չափորոշիչները և/կամ կլիմայական և ԲՍԿ ռիսկերի նկատառումները: Օրինակ՝ վարկերի գնագոյացման և/կամ արտոնյալության մակարդակի ճշգրտում՝ կլիմայական ռիսկի մակարդակը և/կամ կլիմայական դրական

օգուտները սահմանելու համար, ինչպիսիք են ջերմոցային գազերի կրճատումը, կլիմայական դիմադրողականության օգուտները և/կամ Կանաչ տնտեսությանը միտված տեխնոլոգիաների ավելի բարձր չափանիշներին համապատասխանությունը:

- **Ստանդարտների սահմանում.** Հաճախորդը դիմում է ՎՋԵԲ-ի փորձագիտությանը՝ ներառականության և գեներային բարձր չափանիշների և/կամ հավասար հնարավորությունների գործողությունների ծրագրերի մշակման համար:
- **Գիտելիք, նորարարություն և կարողությունների զարգացում.** ՎՋԵԲ-ը տրամադրում է փորձագիտություն, նորարարություն, գիտելիք և/կամ կարողություններ, որոնք կարևոր են նախագծի նպատակները ժամանակին իրականացնելու առումով, ներառյալ հաճախորդի կարողությունների ամրապնդման աջակցությունը:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է ՖՀ կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն, 2024թ): «ԱԿԲԱ Լիզինգը» ՎՋԵԲ-ի ընթացիկ հաճախորդներից է և գործում է բնապահպանական և սոցիալական (Բ և Ս) չափանիշների համապատասխան՝ իր ընթացիկ պարտավորությունների շրջանակում: «ԱԿԲԱ Լիզինգը» պետք է շարունակի հետևել ՎՋԵԲ-ի Բնապահպանական և սոցիալական 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջներին՝ ԲՍԸ (2024)-ի շրջանակում, այդ թվում ՎՋԵԲ ԲՍ բացառությունների ցուցակին: «ԱԿԲԱ Լիզինգի» կողմից ֆինանսավորվող ենթափզինգառուները ևս պետք է համապատասխանեն գործող ազգային բնապահպանական, սոցիալական, առողջապահական, անվտանգության և աշխատանքային օրենքներին: «ԱԿԲԱ Լիզինգը» պարտավոր է նաև Բանկին ներկայացնել տարեկան բնապահպանական և սոցիալական հաշվետվություններ, որոնցում մանրամասն նկարագրվում է ԲՍԴ-ների համապատասխանությունը և տարվա ընթացքում առաջացած ցանկացած բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծումները:

Կանաչ գնահատումներ

Ծրագիրը ճանաչվել է Փարիզյան համաձայնագրին համապատասխան՝ հիմնվելով ՎՋԵԲ-ի (EBRD) կողմից անուղղակիորեն ֆինանսավորվող ներդրումների համար կիրառվող Փարիզյան համապատասխանության մոտեցման վրա:

Համապատասխանության որոշումը սահմանվում է 1-ին հենասյան (համագործակցող կողմի պարտավորությունը Փարիզի համաձայնագրի նկատմամբ) և 2-րդ հենասյան (ենթագործարքների զտիչ) կիրառման պայմանով: ՎՋԵԲ-ի ֆինանսավորման 100%-ը դասակարգվում է որպես կանաչ ֆինանսավորում, քանի որ այն աջակցում է կլիմայի փոփոխության մեղմման նպատակներին հասնելուն ուղղված գործունեությանը: Վերագրումը կատարվում է համաձայն ՎՋԵԲ-ի ներդրումների կանաչ ֆինանսավորման սահմանման մեթոդաբանությանը:

Տեխնիկական աջակցություն և դրամաշնորհի ֆինանսավորում

Սույն գործառնությունը կօգտվի տեխնիկական աջակցության (ՏԱ) կողմից տրամադրվող օժանդակությունից և խթաններից, որը ֆինանսավորվում է համապատասխանաբար Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) և Կլիմայի ներդրումային հիմնադրամի կողմից: ՏԱ-ի նպատակը Հայաստանի ֆինանսական միջնորդներին, այդ թվում՝ «ԱԿԲԱ Լիզինգին», աջակցելն է կարողությունների զարգացման, շուկայի խթանման, նախագծերի գնահատման, ինչպես նաև ընդհանուր մոնիթորինգի և հաշվետվությունների պատրաստման գործընթացներում: Ավելին, Վերականգնվող Էներգիայի ընդլայնման ծրագրի (Scaling-up Renewable Energy Programme) կողմից «ԱԿԲԱ Լիզինգի» հաճախորդներին տրամադրվող ներդրումային խթանները՝ մինչև 1.0 մլն

ԱՄՆ դոլարի չափով, կուղղվեն կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ծրագրերի խթանմանը, որոնք ունեն էական դրական արտաքին ազդեցություն, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաների վաղ կիրառողներին խրախուսելուն՝ կրիտիկական զանգվածի ձևավորման նպատակով:

Ընկերության կոնտակտային տվյալներ

Անի Թադևոսյան ani.tadevosyanh@acba.am

+37410318888

<https://acbaleasing.am/>

«ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ 0078, Ֆուչիկի փող. 1/1, Երևան, ՀՀ

Ծրագրի ամփոփ նկարագրի վերջին թարմացում

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎԶԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲԱՔ)

[ԲԱՔ-ն](#) և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎԶԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանել «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲԱՔ-ն և ԳՊ-ները պարունակում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն տեղեկությունների հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎԶԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն

ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակային խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՁԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՍԶ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՁԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՁԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում կեղծիքի, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրանից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են կեղծիքի կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկուլց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկուլցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկուլցները, այդ թվում՝ անանուն զեկուլցները: Չեկուլցները կարող են ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀԲ)

ՏՀԲ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՉԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո նպաստի ՏՀԲ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություն կա ՎՉԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎՉԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՉԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել [Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը](#)՝ իմանալու ավելին ԾՀԱՄ-ի և նրա լիազորությունների մասին, ինչպես [Դիմում ներկայացնել](#) ստուգում անցկացնելու համար, կամ կապ հաստատել ԾՀԱՄ-ի հետ էլ-փոստով ipam@ebrd.com՝ ԾՀԱՄ-ի և դիմում ներկայացնելու վերաբերյալ ուղղորդում և լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: